#1, Նոյեմբեր, 2019

Կ ա ն թ ե ղ

Բավրայի հայ կաթողիկէ երիտասարդական միության թերթ

«Կանթեղ» թերթը ներկայացնում է Բավրայի հայ կաթողիկե երիտասարդական միության գործունեությունը, ինչպես նաև Հայ Կաթողիկե և Ընդհանրական Եկեղեցու վերաբերյալ հոգևոր նյութեր: Երիտասարդական միությունը, որպես կանոնավոր գործունեություն իրականացնող խումբ, կազմավորվել է 2018թ. և արդյունքն է գյուղի հայ կաթողիկե հոգևոր հովիվների և երիտասարդների միասնական ջանքերի. նրանց նպատակն է՝ ծառայել Տեր Հիսուս Քրիստոսի Կաթողիկե՝ Ընդհանրական Սուրբ Եկեղեցուն և տեղի համայնքին, հայ հասարակությանը:

Բավրայի երիտասարդական միությունն անբաժանելի մասն է Հայ Կաթողիկե Երիտասարդաց միության:

Բավրայի հայ կաթողիկե երիտասարդական միության

տեսլականը, առաքելությունը, գործունեության սկզբունքները և կանոնները, գործունեությունը

Տեսլականը

Բավրայի Երիտասարդական միության տեսլականն է՝ համայնքի երիտասարդներին առաջնորդել դեպի մի ապագա, երբ երիտասարդներն ինքնուրույն և միասին կարող են իրենց զարգացման համար ապահովել առավելագույն նպաստավոր պայմաններ և կայանալ որպես Տեր Հիսուս Քրիստոսին և մարդկության լավագույն արժեքներին նվիրված ստեղծարար և առաջնորդող երիտասարդներ:

Առաքելությունը

Բավրայի Հայ Կաթողիկե Երիտասարդական միությունն ունի հետևյալ առաքելությունը.

1. ապրել Տեր Հիսուսի Քրիստոսի Ավետարանի և Սուրբ Եկեղեցու ուսուցումների համաձայն, քարոզել Ավետարանը կյանքով, խոսքով եւ գործունեությամբ, միասին ընթանալ դեպի սրբություն,
2. զարգանալ (և օգնել համայնքի մյուս երիտասարդներին ևս զարգանալ) համակողմանիորեն՝ հոգևորապես,

հասարակական հարաբերություններում, զանազան հմտություններով և միասին ստեղծել ինքնազարգացման նպաստավոր պայմաններ՝ ավելի աստվածահաճո, առողջ և բարեկեցիկ անհատական և համայնքային կյանք ունենալու նպատակով:

Գործունեության սկզբունքները և կանոնները

1. Մշտապես ձգտել Տեր Հիսուս Քրիստոսի հետ առավել սերտ միության, սրբության և հոգևոր կատարելագործման՝ մասնակցելով Սուրբ Պատարագներին և այլ հոգևոր արարողություններին, աղոթելով և ընթերցելով Աստուածաշունչ և այլ հոգևոր գրականություն:
2. Մշտապես պատրաստ լինել օգնելու հոգևորականներին՝ հոգևոր արարողությունների, բարեգործություններին, հասարակական միջոցառումների կազմակերպման մեջ՝ նաև հանդես գալով անհատական և միասնական նախաձեռնություններով և նոր գաղափարներով:
3. Մշտապես ներկա լինել միության հանդիպումներին, իսկ բացակայության դեպքում տեղյակ պահել հոգևոր հովվին:
4. Միության գործունեության ընթացքում մշտապես կազմել կանոնավոր գործունեության երկարաժամկետ (մեկ տարվա) և կարճաժամկետ (մեկ ամսվա) նկարագիր, հանդիպումների օրակարգ և խստորեն հետևել օրակարգին՝ միշտ բաց լինելով նոր անդամների, առաջարկությունների, նոր ծրագրային հավելումների առջև:
5. Հարգել և սիրել միմյանց, ըստ Քրիստոսի պատվիրանի («Սիրեցե՛ք միմյանց, ինչպես ես ձեզ սիրեցի», Հովի. 13, 34), լինել ներողամիտ միմյանց, ինչպես նաև բոլոր նրանց նկատմամբ, ովքեր չեն հասկանում և չեն գնահատում միության գործունեությունը:
6. Ուշադիր, համբերությամբ և գնահատանքով լսել, վերլուծել միմյանց կարծիքները, գաղափարները, առաջարկները, քննարկել, ջանալ տարակարծություններից դուրս բերել ընդհանուր եզրահանգումներ և գալ ընդհանուր հայտարարի, շարժվել նույն տեսլականի և առաքելության ուղղությամբ, աշխատել միասնական նպատակների համար:
7. Չլինել մեկուսացած, պատրաստ լինել միասնական աղոթքի և կամավոր աշխատանքի, զոհողությունների:
8. Որոշումները կայացնել՝ բոլորի կարծիքները լսելուց և վերլուծելուց հետո՝ ժողովրդապետի հավանությամբ և առաջնորդությամբ:
9. Մշտապես փնտրել միության գործունեության զարգացման նոր ուղիներ և հեռանկարներ:
10. Բաց լինել՝ երիտասարդական տարբեր կառույցների հետ համագործակցության համար, եթե նրանց գործունեությունը չի հակասում միության սկզբունքներին:

Գործունեությունը

Միության գործունեությունը ընթանում է երկու հիմնական ուղղություններով՝

1. ինքնազարգացում և
2. համայնքի զարգացում:

1.Ինքնազարգացման գործողություններ

Ա. Աստվածաշնչի և այլ օգտակար գրականության հատվածների ընթերցում և քննարկում, հոգևոր ապրումի կիսում,

Բ. Կազմակերպել զրույցներ, սեմինարներ՝ հոգևոր և սոցիալական թեմաներով՝ հատկապես ուսումնասիրելով Կաթողիկե Եկեղեցու սոցիալական ուսմունքը, նաև

հասարակագիտության ձեռքբերումները, որոնք կարող են զարգացնել հաղորդակցական, աշխատանքային, լեզվական հմտությունները, հրավիրել մասնագետներ և մեկնել մասնակցելու այլ վայրերում կազմակերպվող սեմինարների:

2. Համայնքի զարգացման գործողութիւններ

Ա. Մշակել և իրականացնել պատանիների և երիտասարդների կրթական, զարգացողական ծրագրեր՝ խմբակների, դասընթացների, զրույցների, վարժանքների, սեմինարների, ճանաչողական այցերի միջոցով՝ նրանց փոխանցելով ամբողջական՝ հոգևոր և սոցիալական, ինքնազարգացման համար անհրաժեշտ միջոցների հնարավորինս լայն ընտրություն, որպեսզի նրանք կարողանան ինքնուրույն ջանքերով հասնել բարձունքների:

Բ. Բարեգործական ձեռնարկներ՝ աղքատներին, ծերերին, հիվանդներին նյութական և այլ աջակցություն տրամադրելու նպատակով:

Գ. Մշակել և իրականացնել համայնքի տնտեսական և սոցիալական զարգացման ծրագրեր՝ փնտրելով և գտնելով շահագրգիռ հովանավոր կառույցների և անձանց (ֆոնդհայթայթում):

Դ. Համայնքը դարձնել երիտասարդների համար գրավիչ՝ ապրելու և աշխատելու համար՝ ցույց տալով, քարոզելով սեփական ծրագրերի արդյունավետությունը, այլ ստեղծարար գաղափարներ իրականացնելու հնարավորությունը:

Ե. Իրականացնել բնապահպանական միջոցառումներ և ծրագրեր:

Զ. Իրականություն դարձնել Եկեղեցուն կից երիտասարդական կենտրոնի կառուցման երազանքը:

Երիտասարդական միության այլ նախաձեռնությունները

Սիրո փոքրիկ քայլեր

Դեռևս 2018թ. նոյեմբերի 3-4-ը «Կարդինալ Աղաջանյան» երիտասարդական զարգացման հայ կաթողիկէ կենտրոնում տեղի ունեցած հանդիպման ժամանակ առաջին անգամ կազմակերպվեց փորձնական փոքր դրամաշնորհային ծրագրերի մրցույթ: Երիտասարդները դասընթացավարների օգնությամբ ինքնուրույն կազմեցին ծրագրեր՝ համայնքներում տարբեր սոցիալական, բնապահպանական, կրթական նախաձեռնություններ իրականացնելու համար: Այդ փոքրիկ ծրագրերից հոգևորականների և դասընթացավարների քվեարկությունների արդյունքում հաղթող ճանաչվեցին Շիրակի մարզի Բավրա և Հովտուն, ինչպես նաև Ջավախքի Բավրա գյուղերի երիտասարդների ծրագրերը:

2018-ի դեկտեմբերին Բավրայի երիտասարդներին տրամարդվեցին փոքր դրամաշնորհները և նրանք կարողացան իրականացնել իրենց նախաձեռնությունները:

Նրանք որոշեցին հարմարություններ ապահովել գյուղում միայնակ տարեցներից մեկի տանը՝ ձմռան ցրտից պաշտպանելու համար: Յուղաբեր տատիկն ապրում էր սարսափելի անմխիթար պայմաններում, մի հյուղակի մեջ, որտեղ չկային ամենատարրական պայմաններ, պատուհանները գրեթե բաց էին, քամին ու ձյունը անարգելք ներս էին թափանցում, վառարան չկար, տատիկը ցրտերից պաշտպանվում էր միայն վերմակով ու ծածկոցով: Հիգիենիկ պայմաններից ևս զուրկ էր հյուղակը: Տատիկն ապրում էր իր

կենսաթոշակով և բարեկամների օգնություններով, խնամքով: Երիտասարդներն իրենց ունեցած փոքրիկ գումարով ցելոֆաններ և սոսինձ գնեցին, փակեցին, ջերմամեկուսացրին կորտված ապակիները, սոսինձով փակեցին պատերի ճաքերը, տեղադրեցին վառարան: Նրանք մաքրեցին Յուղաբեր տատիկի սենյակը, ափսեները, սնունդ տարան և ուրախացրեցին տատիկին:

Երիտասարդներն ու պատանիները նախաձեռնում են նաև այլ ձեռնարկներ՝ հագուստի, սննդի հավաքում՝ կարիքավոր ընտանիքների համար, նաև կամավոր սկզբունքով այդ ընտանիքներին են բաժանում Կաթողիկէ Եկեղեցու «Հայկական Կարիտաս» բարեգործական կազմակերպության կողմից ուղարկվող օգնությունը:

Քրիստոնեականի, անգլերենի, համակարգչային հմտությունների դասեր, դասընթացներ, բեմադրություններ

Պատանիներն ու երիտասարդները մեծ հետաքրքրությամբ մասնակցում են նաև քրիստոնեականի, անգլերենի դասընթացներին, եկեղեցական հոգևոր կյանքին, Սուրբ Պատարագին, թափորներին, բեմադրություններին:

Նրանց նախաձեռնողականությունը Բավրայում արդյունավետ է՝ միասնականությամբ և նույն տեսլականներով, որոնց զարգացման ուղղությամբ աշխատում են գյուղի քահանայի (ներկայում՝ Տ. Հովսեփ Քհն. Գալստյան) հետ միասին և նրա առաջնորդությամբ՝ այս ամենը ջանալով համահունչ դարձնել Ավետարանին և մարդու ամբողջական զարգացման վերաբերյալ Կաթողիկէ Եկեղեցու ուսմունքին, որոնց շուրջ կազմակերպվում են զրույցներ: Դասընթացները, զրույցները, երիտասարդական միության գործողությունները հիմնականում տեղի են ունենում գյուղի համայնքային կենտրոնում, որտեղ տեղակայված է նաև գյուղապետարանը:

Բավրայի երիտասարդների նախաձեռնությունների մեկ օրինակ է համայնքային կենտրոնում կազմակերպված անգլերենի դասընթացը, որը 2017-2018թթ. կամավորական սկզբունքով վարում էր գյուղի երիտասարդներից Անժելա Մուրադյանը:

2018թ. նոյեմբերի 28-ից, գյուղի քահանայի և երիտասարդներից Անդրանիկ Մարգարյանի խնդրանքով, անգլերենի դասընթացը սկսեց վարել Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն (YIC) կազմակերպության կողմից Սլովակիայից հյուրընկալված կամավորական Ժոզեֆ Բանասը՝ Գյումրիի գրասենյակի կամավորական թարգմանիչների ուղեկցությամբ: Գյումրիից Բավրա տրանսպորտով կամավորների տեղափոխությունը հովանավորում էր «Հայկական Կարիտաս»-ը: Երեխաներին գրենական պիտույքներ տրամադրեց World Vision բարեգործական կազմակերպությունը, ով անցյալ տարի ևս օգնել էր նույն կերպ: Բավրայի գյուղապետարանը ևս ունի ներդրում՝ համայնքային կենտրոնում տրամադրելով հարմարավետ սենյակ և վճարելով ջեռուցման համար: Այս համատեղ աշխատանքը, ուսուցման ոչ պաշտոնական մեթոդների կիրառությունը զարգացնում է երեխաների լեզվական հմտությունները, նաև նպաստում նրանց սոցիալականացմանը: Անգլերենի դասընթացը շարունակվեց մինչև 2019թ. հուլիսի վերջը, երբ ավարտվեց սլովակ կամավորականի Հայաստանում աշխատելու ժամկետը:

Նախատեսվում է շարունակել անգլերենի ուսուցումը՝ կամավորական սկզբունքներով, ինչպես նաև կազմակերպել երիտասարդների մասնակցությունը՝ անգլերենով անմիջական շփման ակումբներում, երբեմն այցելելով Գյումրիի: Անգլերենի դասընթացի նպատակներից մեկն է նաև ավելի ավագ տարիքային խմբի աշակերտներին տալ հմտություններ, որպեսզի հետագայում արդեն իրե՛նք կամավոր հիմունքներով դասապատրաստումներ անեն կրտսեր աշակերտների հետ:

2019թ.-ի սկզբից Անդրանիկ Մարգարյանը սկսեց կամավոր հիմունքներով երիտասարդների և պատանիների համար վարել համակարգչային հիմնական հմտությունների դասընթաց, որի նպատակով

երիտասարդները շահեցին փոքրիկ դրամաշնորհ՝ «Հայկական Կարիտասի» «Ծխական հասարակական խորհուրդներ ծրագրի շրջանակներում» (ծրագրի ղեկավար՝ Քրիստինե Մխիթարյան), Աշոցքի համայնքապետարանի համաֆինասնավորմամբ, և գնեցին երեք համակարգիչ: Դասընթացը շարունակվում է:

Բեմադրություններ և այլ տոնական միջոցառումներ

Երիտասարդական միությունը եկեղեցական տոների առթիվ կազմակերպում է թեմատիկ բեմադրություններ: Առաջին մեծ բեմադրությունը տեղի ունեցավ 2018թ.՝ նվիրված Երանելի Իգնատիոս Արքեպս. Մալոյանի նահատակությանը՝ 2015թ. Հայոց Ցեղասպանության ժամանակ: Տ. Հովսեփը բեմադրության սցենարը կազմել էր՝ հիմնվելով Երանելի Մալոյանի կենսագրական փաստերի վրա:

Երիտասարդները և պատանիները բեմադրություն ներկայացրեցին նաև Սբ. Ծննդյան տոնի նախօրեին՝ 2018թ.

դեկտեմբերի 24-ին, Ավետարանական պատումի հիման վրա:
Հետաքրքիր կազմակերպվեց նաև 2019թ. Տեառնընդառաջի տոնը՝ դառնալով իրական երիտասարդական մի տոնախմբություն՝ խարույկի շուրջ և միաժամանակ՝ հյուրասիրություն՝ բոլորի համար. աղջիկներն իրենց ձեռքով պատրաստել էին համեղ թխվածքներ և տաք սուրճ ու թեյ՝ այդ օրվա խիստ ցրտի և բքի սառնությունը մեղմելու

համար: Նրանք ջերմ սրտերով այդ ցրտին և ձնաբքի մեջ շարունակում էին պարել և ուրախանալ՝ մինչև մութն ընկնելը:

2019թ. Սուրբ Սարգսի տոնը ևս կազմակերպվեց շատ հետաքրքիր ձևով. երիտասարդ տղաները մարմնավորեցին Սուրբ Սարգիս զորավարի կերպարը՝ ձիով, որ շրջեց գյուղի փողոցներում, Սարգիսը նվերներ բաժանեց աղջիկներին, իսկ աղջիկներն իրենց իսկ սցենարով բեմադրեցին մի կենցաղային փոքրիկ դրամա:

Հետաքրքիր մտահղացումների համար Տ. Հովսեփը Ռաֆայել Սրբազանի անունից երեք երիտասարդների պարգևատրեց հատուկ շնորհակալագրերով:

2019թ. մարտի 25-ին՝ Ավետման տոնին, Սուրբ պատարագից հետո համայնքային կենտրոնում երիտասարդներն ու պատանիները միասին մի գեղեցիկ միջոցառում արեցին՝ նվիրված Աստվածամոր Լուրդի երևումներին և Բեռնադետին և միաժամանակ նվիրված

Հովհաննես Թումանյանի ծննդյան 150-ամյակին՝ արտասանելով նրա բանաստեղծությունները:

Զատկի տոնից առաջ՝ Ավագ Ուրբաթ երիտասարդներն ու պատանիները քահանայի առաջնորդությամբ պատրաստեցին մի մեծ փայտե խաչ և կատարեցին «Խաչի ճանապարհ» ջերմեռանդությանը նվիրված մի թափոր՝ շրջելով գյուղի փողոցներում:

2019թ. մայիսին Աստվածամորը նվիրված մայիսյան ջերմեռանդության պսակը եղավ միասնական աղոթական ուխտագնացությունը դեպի գյուղի հին եկեղեցի, որ գտնվում է գյուղից 5կմ. հեռավորության վրա:

Բավրայի երիտասարդները մասնակցեցին «Երիտասարդության համայնքային օրեր-III» միջոցառմանը

Հաճելի ժամանցն ու եկեղեցական կյանքը՝ մեկ փեղում

2019 թվականի հուլիսի 19-26-ը Հայ Կաթողիկէ Առաջնորդության «Աղաջանյան ճամբարում» տեղի ունեցավ «Համայնքային Երիտասարդական օրեր-III» միջոցառումը: Այն մեծ հետաքրքրություն էր առաջացրել երիտասարդների շրջանում: Յոթօրյա հավաքին մասնակցելու էին եկել թվով 250 երիտասարդներ՝ Հայաստանից, Վրաստանից, Ռուսաստանից, Իտալիայից, Լիբանանից, Սիրիայից, Իրաքից և Թուրքիայից: Բավրայի մասնակցում էին 7 երիտասարդներ: Երիտասարդների համար այս միջոցառումը հիանալի առիթ հանդիսացավ՝ միմյանց հետ շփվելու, փորձով և գաղափարներով փոխանակվելու, մտերմանալու համար:

Եկեղեցին համախմբել էր տարբեր մտածելակերպի և տարբեր մշակույթների պատկանող երիտասարդներին, որոնց բոլորին միավորում էր մեկ ընդհանուր բան՝ հավատն առ Աստված և Եկեղեցի: Ճամբարում երիտասարդների առօրյան շատ հագեցած էր ու հետաքրքիր: Նրանք ամեն օր լսում էին բանախոսություններ՝ իրենց ինքնության, մտածելակերպի և պատկանելիության մասին, այնուհետ խմբային քննարկումների միջոցով ամբողջացնում էին լսածը, մասնակցում էին Սուրբ Պատարագների՝ այդ կերպ ավելի ամրացնելով իրենց կապը Կաթողիկէ Եկեղեցու

հետ և միմյանց հետ: Երիտասարդների մոտ մոտիվացնող ելույթներ էին ունենում իրենց բնագավառներում արդեն իսկ մեծ հաջողությունների հասած հյուրերը, ովքեր փորձում էին մաքսիմալ կերպով իրենց գիտելիքները փոխանցել նրանց: Ճամբարային այս օրերի անբաժանելի մասն էին կազմում նաև սպորտային խաղերն ու համայնքային մշակութային երեկոները, որոնք ապահովում էին ներկաների բարձր տրամադրությունը:

Այս միջոցառման շրջանակներում մասնակիցները նաև հնարավորություն ստացան այցելելու Հայաստանի եկեղեցիներից մի քանիսը՝ Սուրբ Գայանե, Սուրբ Հռիփսիմե և Սուրբ Էջմիածին եկեղեցիները: Դրսից եկածների համար այն հայկական մշակույթին ծանոթանալու հիանալի առիթ հանդիսացավ, նրանք իրենց համար բացահայտեցին մեր մշակույթի յուրահատկություններն ու գաղտնիքները, նրանց մեջ ավելի ամրապնդվեց քրիստոնեական հավատի գիտակցությունը:

Այս այցից հետո երիտասարդական օրերը շարունակվեցին կրկնապատկված եռանդով ու ոգևորությամբ: Մասնակիցների հետ զրույցից պարզ է դառնում, որ ճամբարում նրանք հիանալի ժամանակ են անցկացնում, և այստեղից հեռանում են միայն լավ տպավորություններով: Իտալիայից Լևոնյան վարժարանի նորընծա Հայկ Շահինյանը նշեց, որ արդեն երկրորդ տարին է ինչ մասնակցում է այս հավաքին, և ամեն տարի մեծ հաճույքով է հետ վերադառնում: Այս հավաքը, բացի հաճելի ժամանցից, նրան օգնել է նաև վերջնականապես իր ուղղին ընտրելու հարցում. նա վճռականորեն հանգել է որպես ժառանգավոր ճեմարան մտնելու որոշմանը: Քննարկված թեմաներից Հայկն իր համար ամենակարևորը համարում է պատկանելիությունը, ինքնությունը և վկայությունը: Ամենամեծ ցանկությունն է իր փորձով ու գաղափարներով մյուսների հետ կիսվելը և վստահ է, որ այս հավաքը բոլորի համար շատ լավ շանս է՝ իրենց հավատքի մեջ քայլ առաջ կատարելու համար: Վերջում նշեց, որ այս տարի ճամբարում մթնոլորտը ավելի խանդավառ է, մասնակիցները ցուցաբերում են ավելի մեծ ակտիվություն, և հույս հայտնեց,որ այս ամենը շարունակական կլինի:

Երիտասարդները հանդես եկան նաև առաջարկներով. նրանց ցանկությունն է, որ նման հավաքներ հաճախակի կազմակերպվեն, որոնց միջոցով կխթանվի նրանց շփումը դրսում ապրող իրենց հայրենակիցների հետ, և դրա լավագույն միջոցը համարեցին աղոթքն ու Եկեղեցին: Նրանցից շատերը խոստովանեցին, որ այստեղ եկել էին՝ միայն հաճելի ժամանակ անցկացնելու համար, սակայն ճամբարը նրանց շատ ավելի՛ն է տվել. այն ամրապնդել է իրենց հավատը առ Աստված ու Եկեղեցի, և նրանք այժմ իրենց համարում են Կաթողիկէ Եկեղեցու լիարժեք մասնիկներ:

Իրենց հերթին կազմակերպիչները նշեցին, որ ամեն ինչ անում են՝ այս միջոցառումը ավելի մասսայական դարձնելու, ավելի շատ մասնակիցներ ներգրավվելու և ակտիվության մակարդակը տարեց տարի ավելի բարձրացնելու համար: Նրանց խոսքով իրենց ցանկությունը մեկն է՝ այն, որ մասնակիցները ճամբարից հեռանան՝ հաջորդ տարի կրկին վերադառնալու անհագ ցանկությամբ:

Նիկոլ Մարգարյան

Շիրակի պետական համալսարանի Լրագրության բաժնի ուսանող, Հայ Կաթողիկէ Առաջնորդարանի լրատվության կամավորական թղթակից

Բավրայի երիտասարդական միության անդամ, ԵՀՕ-III մասնակից

Աստվածամոր Ծննդյան տոնին նվիրված թափորը

«Աստվածամայրն ի՛նքն է եկել և հրավիրում է ձեզ իր ծննդյան տոնին»

2019թ. սեպտեմբերի 8-ին Բավրա գյուղի հայ կաթողիկէ երիտասարդներն ու պատանիները մի խորհրդավոր թափոր նվիրեցին Աստվածամոր ծննդյան տոնին՝ առաջնորդությամբ Տ. Հովսեփ Քհն. Գալստյանի: Թափորը մեկնարկեց Սուրբ Նշան հայ կաթողիկէ եկեղեցու բակից: Մասնակիցները, Աստվածամոր արձանիկը վերցնելով, աղոթելով ու երգերով շրջեցին գյուղի փողոցներով՝ բնակիչներին, իրենց հարազատներին և տարեկիցներին կոչ անելով միանալ իրենց թափորին: Նրանք միասին այցելում էին նաև բնակիչների տները՝ հրավիրելու թափորից հետո մատուցվելիք Սուրբ Պատարագին, որն այս անգամ առանձնակի կարևորություն ուներ. Աստվածամոր ծննդյան տոնն էր: Տ. Հովսեփը նաև Աստվածամոր արձանիկով օրհնում էր նրանց տներն ու ընտանիքները: Երիտասարդների ջանքերը, իհարկե ապարդյուն չանցան, քանզի այդ օրը Սուրբ Պատարագի մասնակիցների թիվը զգալիորեն գերազանցում էր նախորդ կիրակիներին:

Սուրբ Պատարագի ժամանակ Տեր Հովսեփ Քահանան մանրամասն ներկայացրեց նաև տոնի խորհուրդը՝ մասնակիցների համար այն ավելի ընկալելի դարձնելու համար: Իր քարոզում նա մասնավորապես նշեց, որ Աստվածամայրը եկեղեցական կյանքում շատ մեծ նշանակություն ունի, քանզի նրա շնորհիվ է, որ փրկությունը հնարավոր եղավ մահկանացուների համար, և մենք պարտավոր ենք ամեն անգամ «նոր լույսի ներքո» մտածել այս ճշմարտության վերաբերյալ, ամեն անգամ մեկ քայլ առաջ կատարել մեր հավատքի և սրբության ճանապարհին: Խոսելով Աստվածամոր՝ Եղիսաբեթին այցի մասին, քահանան նշեց, որ Եղիսաբեթը լսելով Աստվածամոր ողջույնը՝ լցվեց Սուրբ հոգով, քանզի մանուկը նրա ողջույնի ձայնից խաղաց իր որովայնում, ինչպես կարդում ենք Ղուկասի ավետարանում: Եղիսաբեթը, որը ևս հղի էր և սպասում էր Սուրբ Հովհաննես Մկրտչին, ասաց, «որտեղի՞ց ինձ այս ուրախությունը, որ իմ տիրոջ մայրը ինձ մոտ գա»: Նույնկերպ նաև մեզանից յուրաքանչյուրս, երբ աղոթում ենք Աստվածամորը, նույնիսկ ամենապարզ բառերով, նա միշտ լսում է մեր խնդրանքը և միշտ մեր կողքին է, մեզ առաջնորդում է մեր կյանքի դժվարությունների մեջ, և մենք հնարավորություն ունենք լցվելու Սուրբ հոգով, ինչպես Եղիսաբեթը, և վայելելու Աստվածամոր ներկայությունը մեր կյանքում և մեր խնդրանքները նրա միջոցով փոխանցելու առ Աստված: «Բայց եկե՛ք ինքներս մեզ հարցնենք. արդյո՞ք մենք Եղիսաբեթի նման ուրախանում

ենք՝ զգալով Աստվածամոր ներկայությունը մեր կյանքում, կամ արդյո՞ք մենք փափագում ենք վայելել Սուրբ Կույսի ներկայության բերկրանքը, Եղիսաբեթի երջանկությունը, Եղիսաբեթի, որ առաջացած տարիքում էր և հղիացավ Հովհաննես Մրտիչով, որովհետև Աստծո համար անհնարին բան չկա: Եղիսաբեթի բերկրանքն իր լրումին հասավ Աստվածամոր ներկայությամբ, որ իր համար առիթ եղավ՝ լցվելու աստվածային շնորհներով, աստվածային կյանքի ներկայությամբ: Արդյո՞ք մենք հասկանում ենք, թե ինչպիսի հնարավորություն և սրբության հեռանկար է մեզ համար բացվում՝ Աստվածամոր ներկայությամբ՝ մեր անհատական, ընտանեկան և հասարակական կյանքում»,- ասաց Տ. Հովսեփը:

Վերջում քահանան ևս մեկ անգամ ներկաներին հորդորեց մասնակցել Սուրբ Պատարագին, պատրաստակամություն հայտնեց երիտասարդների հետ շարունակելու թափորներ կազմակերպելը՝ մարդկանց եկեղեցի հրավիրելու դիտավորությամբ, բայց միևնույն ժամանակ նկատեց, որ այդ ամենը հնարավոր չի լինի առանց նրանց ցանկության. «Դու՛ք ևս պետք է ընդառաջ գաք մեր հրավերին ու խնդրանքներին և կանոնավոր կերպով գաք եկեղեցի, որպեսզի մենք զգանք որ դուք մեր կողքին եք, այնպես, ինչպես և մենք ենք Ձեր կողքին»,-եզրափակեց հոգևոր հովիվը:

Նիկոլ Մարգարյան

Խաչվերացի տոնը Բավրայում

Խաչվերացի տոնին Բավրայի հայ կաթողիկէ երիտասարդական միությունը Տ. Հովսեփ Քհն. Գալստյանի առաջնորդությամբ կիրակնօրյա Սբ. Պատարագից առաջ գյուղում կազմակերպել էին Խաչվերացի թափոր: Երիտասարդները նախապես իրենց պատրաստած մեծ խաչափայտը զարդարել էին դաշտային երփներանգ ծաղիկներով: Թափորը սկսվեց առավոտյան ժամը 10:00-ին, Սուրբ Նշան հայ կաթողիկէ եկեղեցում դիմաց: Առջևից գնում էր բուրվառակիր սպասավորը՝ խնկարկելով ծաղկազարդ խաչափայտին, որ իրենց ուսերին կրում էին երիտասարդները, ապա գնում էր քահանան, երկու կողմերից քշոցակիրները, ապա՝ թափորի մյուս մասնակիցները: Քահանան թափորն առաջնորդում էր դեպի գյուղի չորս կետեր՝ հարավային, արևելյան, հյուսիսային և արևմտյան, և ամեն կետում, ըստ Խաչվերացի կանոնի, որ մեզ ավանդված է Ժամագրքում, երգում էր մեկական ավետարանական հատված, ապա ասում օրհնության աղոթքներ: Իսկ ճանապարհին աղոթում էին Սուրբ Վարդարանը՝ խնդրելով Աստվածամոր բարեխոսությունը իրենց գյուղի բնակիչների համար, որպեսզի Սուրբ Խաչի զորությամբ ամրանա նրանց հավատքը և աճի սերը՝ Աստծո հանդեպ: Քահանան և երիտասարդները ճանապարհին իրենց հանդիպած գյուղացիներին հրավիրում էին թափորին և Սբ. Պատարագին մասնակցություն ունենալու:

Այնուհետև եկեղեցում մատուցվեց Սուրբ Պատարագը: Քահանան իր քարոզում բացատրեց տոնի խորհուրդը և ներկաներին հրավիրեց մտածել մի պարզ, բայց և խտացյալ ճշմարտության մասին.

«Խաչը մարդու հանդեպ Աստծու սիրո նշանն է, և ամեն անգամ խաչին նայելիս՝ պետք է հիշենք հանուն մեզ Տեր Հիսուս Քրիստոսի կատարած զոհաբերությունը: Ամեն անգամ խաչելության նշանին մեր հայացքը սևեռելիս, պետք է հիշենք, որ Աստված մեզ սիրում է, որ մենք մենակ չենք մեր դժվարությունների մեջ, պետք է հիշենք, որ Աստված այնքա՜ն է սիրում մեզ, որ մինչև իսկ «Իր Միածին Որդուն տվեց, որպեսզի ով նրան հավատում է, չկորչի, այլ հավիտենական կյանք ունենա», ինչպես լսեցինք այսօրվա ավետարանում: Խաչի ներկայությունը մեր կյանքում մեզ պետք է հիշեցնի Հիսուսի ներկայության մասին, որ, գուցե, երբեմն թվում է աննկատ, լուռ դիտորդի նման, կամ քնած, ինչպես ավետարանական այն պատմության մեջ՝ փոթորկի մասին, երբ Հիսուս հանգիստ քնած էր նավակի մեջ: Հիսուսի նման, Խաչի պատկերները մեզ միշտ ուղեկցում են, բայց մենք միշտ չէ, որ նրանց նայելիս մտածում ենք Հիսուսի կենդանի, անհերքելի ներկայության մասին, Նրա զորության մասին, միշտ չէ, որ խաչին նայելիս՝ ներքին վստահություն ենք զգում, քաջություն ենք զգում՝ սատանայի փորձությունների, կյանքի մարտահրավերների դեմ հանդիման, ճիշտ ինչպես աշակերտները, որ սարսափել էին փոթորկից, վախի մեջ էին և մոռացել էին, որ Աստծո Որդին իրենց նավակի մեջ է, որ Աստված իրենց հետ է այդ բաց ծովում: Բայց նման պարագաներում, երբ վախեցած ենք, հուսահատ, չենք կարողանում գտնել մեր հարցերի պատասխանները, մենք մի՛շտ կարող ենք նայել Խաչի պատկերին և աշակերտների նման օգնություն աղերսել Հիսուսից՝ գոչելով. «Վարդապե՜տ, քեզ համար բնաւ հոգ չէ՞, որ ահա մենք կորչում ենք»: Եվ Հիսուս հանդարտեցնելու է մեր հոգու ալեկոծությունը, սաստելու է սատանայական ներգործությունները՝ Իր ի սպառ սիրով, Իր Սուրբ Խաչի և Սուրբ Պատարագի ամոքիչ զորությամբ, և մենք էլ աշակերտների պես ապշած ասելու ենք. «Ինչպիսի՞ մեկն է սա…»: Ուրեմն Խաչը մեզ տանում է դեպի ճշմարիտ աստվածաճանաչողություն, սովորեցնում է հասկանալ Աստծո սերը մարդու հանդեպ և միաժամանակ սովորեցնում է փոխադարձաբար սիրել Աստծուն՝ Հիսուսի նման և Նրա օրինակով: Խաչը մեզ ցույց է տալիս, որ սիրվա՛ծ ենք և թե ինչպե՛ս պետք է սիրել…»:

Ահա այս ճշմարտության վրա քահանան սևեռեց ներկաների ուշադրությունը՝ հավելելով, որ յուրաքանչյուր աստվածային խորհուրդ մեզ համար հոգևոր առումով ավելի հարստանալու ևս մեկ առիթ է:

Նիկոլ Մարգարյան

Ուխտագնացություն՝ դեպի Սուրբ Հովհաննես մատուռ

2019թ. հոկտեմբերի 18-ին Բավրայի հայ կաթողիկէ երիտասարդաց միությունը Տիրամոր Վարդարանով ուխտագնացություն կատարեց դեպի Լոռու մարզում գտնվող Սուրբ Հովհաննես Մկրտչին նվիրված մատուռը, առաջնորդությամբ Բավրայի հոգևոր հովիվ Տ. Հովսեփ քհն. Գալստյանի: Վարդարանի աղոթքով այս ուխտագնացությամբ երիտասարդները միացան աշխարհի տարբեր կաթողիկէ համայնքներում նույն օրը տասնյակ հազարավոր մանուկների միասնական Վարդարանի աղոթքին, որը նախաձեռնել է «Օգնություն կարիքավոր եկեղեցուն» (Aid to the Church in Need) կաթողիկէ եկեղեցական բարեգործական կազմակերպությունը՝ հանուն խաղաղության և միասնության՝ հետևելով Սուրբ Պիոյի խոսքերին. «*Եթե մեկ միլիոն մանուկներ աղոթեն Վարդարան, աշխարհը կփոխվի*»:

Սուրբ Հովհաննես մատուռը, որ գտնվում է ծովի մակարդակից 2197մ. բարձրության վրա, շատ սիրված է հավատացյալների կողմից: Մատռան զորությանը հավատալով և Սուրբ Հովհաննես Մկրտչի բարեխոսությամբ հավատացյալները ընդունել են բժշկություններ ծանր հիվանդություններից, շնորհներ և օրհնություններ: Չնայած զառիվեր ճանապարհը բավական դժվար էր և երեկոյան ժամ էր, բայց երիտասարդները Վարդարան աղոթելով՝ բարձրացան մինչև լեռան գագաթին գտնվող մատուռը՝ իրենց դժվարությունը նվիրելով Աստվածամորը և Սուրբ Հովհաննես Մկրտչին՝ խնդրելով խաղաղություն և մեղքերի քավություն: Մատռան մոտ Վարդարանից հետո միասնաբար երգեցին Լիթանիա Սուրբ Կուսին, ապա բարեխոսական աղոթք ուղղեցին Սուրբ Հովհաննես Մկրտչին՝ իրենց համայնքի և ընտանիքների սրբության, աղոթական ջերմեռանդության և առ Աստվա սիրո զորացման դիտավորություններով:

Տ. Հովսեփ Քհն. Գալստյան

Երիտասարդները՝ հույսի առաջամարտիկներ. սեմինար Լոֆթում

2019թ. նոյեմբերի 10-ին, Հայաստանի Բավրա համայնքի հայ կաթողիկէ երիտասարդական միության և Սիզավետ համայնքների երեսուն երիտասարդներ և պատանիներ մասնակցեցին Գյումրիի Սրբոց Նահատակաց Մայր Տաճարում Արհ. Տ. Ռաֆայել Արքեպս. Մինասյանի ձեռամբ մատուցված Սուրբ Պատարագին, որի առիթը Հռոմի Սուրբ Աթոռի Պետությունների հետ հարաբերությունների քարտուղար Արքեպիսկոպոս Փոլ Գալագերի պաշտոնական այցելությունն էր Հայաստան և հայ կաթողիկէ համայնքին:

Սուրբ Պատարագից հետո երիտասարդները մեկնեցին Գյումրիի Լոֆթ կենտրոն, որտեղ նրանց համար սեմինար կազմակերպեց Բավրայի և Սիզավետի հոգևոր հովիվ Տ. Հովսեփ քհն. Գալստյանը՝ «Երիտասարդները՝ հույսի առաջամարտիկներ» խորագրով մի թեմայի շուրջ, որի նպատակն էր օգնել երիտասարդներին ավելի լավ հասկանալ և գնահատել սեփական կարողությունները, աստվածատուր տաղանդները, շնորհները և ճիշտ օգտագործել դրանք: Սեմինարավար քահանան այդ թեման ներկայացրել է նաև 2017թ. Համայնքային երիտասարդաց օրերի ընթացքում: Թեման սկսվեց Սբ. Հովհաննես Պողոս Բ Քահանայապետի խոսքերով. «Դու՛ք եք աշխարհի հույսը, դու՛ք եք Եկեղեցու հույսը, դու՛ք եք իմ հույսը» (22 հոկտեմբեր, 1978թ.): Տ. Հովսեփը բացատրեց, թե ինչու է Եկեղեցին, հատկապես, 1980-ականներից սկսած կարևորում երիտասարդների գործուն մասնակցությունը եկեղեցական կյանքում և, հատկապես, Ավետարանացման առաքելության մեջ: Երիտասարդները մասնակցեցին մի վարժանքի՝ մտածելու համար իրենց կարողությունների մասին, թե ինչպես են դրանք օգտագործում, ինչպիսի խոչընդոտների են հանդիպում և ինչպես կարող են դրանք հաղթահարել: Ծավալվեց հետաքրքիր քննարկում՝ կարևոր փաստերի շեշտադրությամբ:

Սեմինարի երկրորդ մասում քահանան խոսեց այն մասին, որ հարկավոր է մեծ խանդավառությամբ և հաստատակամությամբ զարգացնել սեփական տաղանդները և միշտ ձգտել կատարելության՝ սահմանելով շատ բարձր, գրեթե անհասանելի սանդղակ: Հարկավոր է ամեն մի մասնագիտության մեջ աշխատել լավագույն արդյունքներով՝ միշտ հաղթահարելով ինքդ քեզ: Բայց այս ճանապարհին շատ կարևոր է զարգացնել Աստո հետ կենդանի երկխոսությունը, աղոթական կյանքը և սրբության ձգտումը, միշտ ապավինել Աստծո օգնությանը և չլինել երբեք մեծամիտ և ինքնապաստան: Տ. Հովսեփը երիտասարդներին բացատրեց Սբ. Հովհաննես Պողոս Բ Քահանայապետի խոսքերից մեկը՝ առնված «Հատելով հույսի շեմը» գրքից (Vittorio Messori, “Crossing the Threshold of Hope”).

«Երիտասարդների կենսուրախությունը արտացոլումն է Տիրոջ այն ուրախության, որ Տերն ուներ մարդու արարչագործության ժամանակ»:

Բայց ի՞նչ հասկանալ այս տողերի ներքո, հարցրեց քահանան և արեց հետևյալ առաջարկությունները.

1.ստեղծագործելու անսահման կարողության վստահ գիտակցություն,

2.վայելում ես սեփական ստեղծագործության պտուղները՝ այն գիտակցությամբ, որ գործակցում ես Արարչի հետ, Նրա տված շնորհներով, նմանվում ես Նրան, Ով քեզ տվել է ստեղծագործելու շնորհը,

3.միշտ կարող ես անել ավելի՛ն.

4.կարող ես ստեղծել ավելի՛ գեղեցիկը, ավելի՛ օգտակարը, պարել ավելի գեղեցիկ, գրել ավելի լավ, երգել ավելի լավ, լինել ավելի բարձր որակավորում ունեցող մասնագետ՝ բժիշկ, ուսուցիչ, ստեղծել ավելի լավ IT ծրագրեր, և վերջապես, ավելի լավ քարոզել Աստծո Խոսքը, ապրել ավելի սրբակենցաղ կյանքով և այլն:

5.լի ես հույսո՛վ, որ ամեն բան հաջողվելու է քեզ, կարո՛ղ ես ամեն բան և կանե՛ս ամեն բան, որովհետև հավատում ես Աստծուն,

6.վստահ ես, որ ամեն ինչ լավ և ճիշտ ես անում, երբ ստեղծում ես բարիք և խիղճդ քեզ չի տանջում: Ճիշտ, ինչպես Արարիչն Աստված ամեն մի արարչագործությունից հետո տեսավ, որ «ամեն ինչ լավ է»:

Երիտասարդները կատարեցին ևս մեկ վարժանք՝ այս անգամ քննարկելու համար, թե ինչպիսի անհատական հարաբերություն ունեն Աստծո հետ և ինչպես են ապրում իրենց հավատքը միասին՝ որպես երիտասարդական միություն, ինչ են անում և ինչ ծրագրեր ունեն՝ մոտ ապագայում իրականացնելու համար:

Տ. Հովսեփը հատկապես շեշտեց սեփական ազատությունը, կյանքը պատասխանատու ձևով ապրելու անհրաժեշտության մասին, ազատություն, որը մարդու համար իր Արարչի հետ նմանության հիմնական հատկանիշներից

մեկն է և որը, սխալ ընկալվելու դեպքում, տանում է ազատության իրական կորստյան:

Վերջում սեմինարավարը երիտասարդներին հրավիրեց լրջորեն ընդունել մի ժամանակակից մարտահրավեր՝

ստեղծել հոգևոր, հասարակական բարեփոխիչ միություններ, շարժումներ, կազմակերպություններ, որոնք կաշխուժացնեն եկեղեցում աշխարհականների աշխատանքը, առաքելությունը՝ ի նպաստ ավետարանացման:

Տ. Հովսեփ

Նախատեսվող Սուրբ Ծննդյան միջոցառումները և

ՀՐԱՎԵՐ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ

Սիրելի՛ հարազատներ և բավրեցիներ, մեր հայ կաթողիկէ երիտասարդական միությունը պատրաստվում է Սուրբ Ծննդյան տոնին: Այս տարի մենք որոշել ենք Սուրբ Ծննդյան նախօրեին՝ դեկտեմբերի 24-ին, Սուրբ Պատարագից հետո ներկայացնել մի բեմադրություն, որի սցենարը մշակել ենք ինքներս, գրել են Վեներա Պետրոսյանը և Տ. Հովսեփը: Բեմադրությունը կոչվում է «Սուրբ Ծննդյան հրաշք՝ Սաթենիկի համար» և ներկայացնում է ոչ թե Ավետարանական սրբազան պատումը, այլ մեր իրականությունից վերցված մի դրվագ, որով ուզում ենք ասել, որ այսօ՛ր և մի՛շտ, կյանքի բոլոր պարագաներու՛մ էլ հնարավոր է ականատես լինել աստվածային միջամտության և հրաշքների՝ միայն մեկ պայմանով՝ *եթե հավատանք և շփկենք մեր կյանքը ՝ Աստծո կամքի համաձայն*:

Բեմադրությունից հետո նախատեսում ենք սկսել հինգօրյա բարեգործական արշավ՝ կարիքավոր երեխաներին օգնելու և նրանց համար նվերներ պատրաստելու նպատակով: Դեկտեմբերի 24-ի երեկոյան, երիտասարդական միության անդամներով, Տ. Հովսեփի հետ միասին, Հիսուս Մանկան արձանիկով կշրջենք գյուղի փողոցներով, կբախենք ձեր դռները և կխնդրենք կարիքավոր երեխաների համար նվերներ տալ՝ սննդի կամ դրամի տեսքով: Միասին ուրախ, Սուրբ Ծննդյան բարության մթնոլորտում նաև կաղոթենք բոլորիդ համար: Ձեռնարկը կշարունակվի ամեն օր՝ մինչև դեկտեմբերի 30-ը: Զուգահեռ, երիտասարդների մի խումբ դեկտեմբերի 25-ի տոնական Սուրբ Պատարագից հետո, եկեղեցու մոտ, խանութի դիմաց կտեղադրի մի սեղան, որի վրա կդրվի մի արկղ, որի մեջ կխնդրենք խանութի բոլոր հաճախորդներին կատարել նվիրատվություններ՝ իրենց ամանորյա գնումներից, դարձյալ կարիքավոր երեխաների համար: Աստծո կամքով, դեկտեմբերի 31-ին, ձեր մեծահոգությամբ հավաքված օգնությունը կտրամադրենք Բավրայում և այլ համայնքներում ապրող երեխաներին:

Բոլորին սիրով հրավիրու՛մ ենք մասնակցելու Սուրբ Պատարագներին, հատկապես տոներին, ինչպես նաև՝ դիտելու մեր բեմադրությունը, միանալու մեր բարեգործական թափորին, բացելու ձեր տների և սրտերի դռները՝ Սուրբ Ծննդյան բարության ջերմությունը և քնքշությունը փոխանցելու մեր կարիքավոր սիրելի մանուկներին՝ վկայելով, որ սիրում ենք Հիսուս Մանկանը գործով:

Բավրայի հայ կաթողիկէ երիտասարդներ

Խմբագրի խոսքը

Սիրելի հավատացյալնե՛ր, այս փոքրիկ թերթի ստեղծման նպատակները երկուսն են:

1.Նախ մեզ համար կարևոր է մեր երիտասարդների և պատանիների գործունեության մասին ձեզ տեղեկացնելը, որովհետև ձեզանից շատերը չգիտեն կամ քաջատեղյակ չեն, թե ինչ են անում ձեր երիտասարդներն ու պատանիները, երբ ամեն կիրակի՝ Սուրբ Պատարագից առաջ, երկու ժամով հավաքվում են համայնքային կենտրոնի շենքում և, հաճախ, հազիվ տանելի ցրտի պայմաններում, որ ջանում ենք փոքր-ինչ

մեղմել, ճիշտ ինչպես եկեղեցում: Բայց մեր սրտե՛րն են ջերմ և վառված՝ Աստծո հանդեպ անսպառ սիրով և երախտագիտությամբ, վճռական՝ աշխատելու միասին՝ հանուն համայնքի երիտասարների համակողմանի զարգացման, ձեր բոլորի բարեկեցության, երջանկության և, ի վերջո, սրբության: Թե ինչ ենք մենք արել և պատրաստվում անելու, ուզում ենք ներկայացնել այս թերթում, որ հուսով ենք՝ կկարդաք: Ուզում եմ, որ ավելի ուշադիր հետևեք ձեր զավակների հավատքի նկարագրին, գործերին, աստվածատուր կարողություններին և ինձ հետ ու բոլոր շահագրգիռ կառույցների հետ միասին ամեն ինչ անեք՝ նրանց խրախուսելու, աջակցելու, զարգացման հնարավորություններ ստեղծելու համար և ոչ երբեք կտրելու նրանց հույսերի, երազանքների, խանդավառության թևերը՝ սահմանափակելով նրանց՝ որպես լիարժեք անհատներ կայանալու հնարավորությունները: Այդ հնարավորությունները ինքնին չեն ստեղծվում, միշտ հարկավոր են մարդիկ, ովքեր դրանք միասնաբար ջանում են *ստեղծել*, թեկուզ ոչնչից՝ կատարյալ հուսահատության մեջ: Այդպիսի ստեղծարար անհատներ են *ձե՛ր զավակները*՝ մե՛ր երիտասարդները և մեր բոլորիս ապագան: Իսկ մենք կոչված ենք նրանց ծառայելու և օգնելու: Ձեր վախերը, հաճախ անհիմն մտահոգությունները, հույսի պակասը ձեր մեջ, երիտասարդական ավյունի պակասը ձեր մեջ *չպետք է* խոչընդոտ դառնան ձեր զավակների առաջընթացի համար: Մենք ուզում ենք օգնել երիտասարդներին՝ հույս ունենալու այնտեղ, ուր թվում է, թե ամեն ինչ անհույս է, սիրո գործեր ծավալելու, բարիք ստեղծելու այնտեղ, ուր թվում է, թե անիմաստ է աշխատելը: Ուզում եմ, որ իրենք, այդքա՞ն լավն են, լինեն *ավելի* լավ զավակներ՝ ձեզ համար և *ավելի* լավ զավակներ՝ Եկեղեցու համար և *ավելի* լավ քաղաքացիներ՝ իրենց երկրի և մարդկային հասարակության համար: Չեմ կարծում, որ չկիսեք իմ այս ցանկությունը:

Բայց ժամանա՛կն է ավելի ակտիվ խրախուսելու ձեր երիտասարդներին, որպեսզի մասնակցեն երիտասարդական միության ձեռնարկներին: Բոլոր խնդիրները կհաղթահարենք միասին, ինչպես արդեն, երևի, համոզվել եք, թե որքա՛ն թանկ է ինձ համար յուրաքանչյուր երիտասարդի ներկայությունը:

Սիրելի՛ երիտասարդներ և պատանիներ՝ նրանք, *ովքեր դեռ չեն մասնակցում մեր ձեռնարկներին*, հրավիրում ենք ձեզ ևս միանալու մեր միությանը, ձեր *բոլոր* խնդիրները կհաղթահարենք միասին, համոզված եղե՛ք:

2.Թերթի ստեղծման երկրորդ նպատակն է ձեզ օգնելը, որպեսզի ավելի հստակ նկատեք Աստծո ներկայության և աստվածային սիրո նշանները ձեր ընտանիքներում և ձեր համայնքներում: Այդ նշանները ձեր *երիտասարդներն իրե՛նք են*՝ փաստը Սուրբ Հոգու շարունակական, լուռ ներգործության՝ նրանց խանդավառ սրտերում, նրանց հավատքը, միասնականությունը, ավելին անելու, իմանալու, աղոթելու ցանկությունը: Նրանք ունեն առաքելություն՝ այդ ամենը փոխանցելու նաև ձեզ, որ հաճախ, կենցաղային հոգսերով տարված, մոռանում եք կամ չեք կարևորում Քրիստոսի ներկայությունը, մասնակից չեք լինում Սուրբ Պատարագին: Նրանց առաքելությունն է՝ իրենց գործերով ձեզ հիշեցնել ձեր հոգևոր արմատները, ինքնությունը և Հիսուսի հրավերը՝ առավել մոտենալու Իրեն և սիրելու Ձեր Տեր Աստծուն ամբողջ հոգով, մտքով և սրտով, սիրել այնպես՝ ինչպես Ինքն է սիրում յուրաքանչյուրիդ. Ամեն:

Տ. Հովսեփ Քհն. Գալստյան

Հոգևոր հովիվ Բավրայի, Մեծ Սեպասարի, Սիզավերտի, Ղազանչիի

Ուշադրությու՛ն

Բավրայի հայ կաթողիկէ երիտասարդական միության գործունեության, ինչպես նաև այլ տարաբնույթ եկեղեցական իրադարձությունների, քարոզների, տեսանյութերի մասին պատմող լուրերի, վերլուծությունների կարող եք հետևել նաև՝ այցելելով Հայ Կաթողիկէ Առաջնորդության համցանցային կայքը՝ armenianchurchco.com հասցեով, կամ Facebook հետևյալ էջերը. Հայ Կաթողիկէ Եկեղեցի/Armenian Catholic Church, Բավրայի հայ կաթողիկէ երիտասարդական միություն:

Թերթի տպագրության հովանավորներ են՝

Առաջնորդ Կաթողիկէ Հայոց Հայաստանի, Վրաստանի, Ռուսաստանի, Ուկրաինայի և Արևելյան Եվրոպայի

«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպություն

Թերթի կամավորական թղթակից՝ Նիկոլ Մարգարյան

Խմբագիր՝ Տ. Հովսեփ Քհն. Գալստյան՝ հոգևոր հովիվ Բավրայի, Մեծ Սեպասարի, Սիզավետի, Ղազանչիի